# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԻՍ

## Հանրամատչելի գործնական ուղեցույց տղամարդկանց համար, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ (ՏՍՏ)

# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼԻՍ

## Հանրամատչելի գործնական ուղեցույց տղամարդկանց համար, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ (ՏՍՏ)

Երևան 2013

# ՆԱԽԱԲԱՆ

Մեր հանրապետությունում այն տղամարդիկ, ովքեր սեռական հարաբերություն են ունենում տղամարդկանց հետ (այսուհետև՝ ՏՍՏ), շատ հաճախ դառնում են խտրական վերաբերմունքի և իրավունքների այլ կոպիտ խախտումների թիրախ: Բացառություն չէ նաև բժշկական օգնության և սպասարկման ոլորտը: Բազմաթիվ իրավունքներ, հատկապես՝ ՏՍՏ-ների դեպքում, մնում են «թղթի վրա» և հաճախ առօրյա կյանքում կիրառություն չեն ստանում: Նման իրավիճակի պատճառները բազմաթիվ են՝ ՏՍՏ-ների նկատմամբ հանրության մերժողական վերաբերմունք, համապատասխան օրենսդրության կամ օրենքի իրականացման մեխանիզմների անկատարություն, ՏՍՏ-ների կողմից իրենց իրավունքների մասին և այդ իրավունքները խախտվելիս համապատասխան քայլերի դիմելու վերաբերյալ տեղեկացվածության անբավարար աստիճան: Քիչ չեն նաև այնպիսի դեպքերը, երբ անձինք չեն կարողանում անգամ տարանջատել օրենքը խախտումից:

Իրավախախտումների մեջ քիչ չեն դեպքերը, երբ ոտնահարվում են մարդու իրավունքները, այնինչ դրանք բնական և անօտարելի են և նրան պատկանում են ի ծնե: Իրականում, ոչ ոք չի կարող մարդուն զրկել իր բնական իրավունքներից՝ կյանքի, անձնական անձեռնմխելիության, խղճի, խոսքի, արտահայտվելու ազատության, ընտանեկան կյանքի գաղտնիության և այլն: Առողջության իրավունքը նույն մարդու իրավունքն է, որը վերաբերում է բժշկական օգնություն և սպասարկում ստանալու ոլորտին: Առողջության իրավունք ունեն անխտիր բոլորը՝ անկախ սեռից, ազգությունից, սեռական կողմնորոշումից և (կամ) սեռական վարքագծից:

Սույն գրքույկը նախատեսված է ՏՍՏ-ների համար և նպատակ ունի բարձրացնել բժշկական օգնություն և ծառայություն ստանալիս մարդու իրավունքների վերաբերյալ նրանց գիտելիքները: Սեփական իրավունքների մասին լիարժեք պատկերացում կազմելն առաջին քայլն է՝ պայքարելու նույն իրավունքների նկատմամբ արհամարհական վերաբերմունքի կամ դրանց ոտնահարման դեմ: Գրքույկում կներկայացվեն նաև մեջբերումներ ոլորտի առանցքային օրենքներից և այլ իրավական ակտերից:

Եթե գրքույկի էջերը թերթելիս կհանդիպեք մտքերի, որոնց վերաբերյալ կցանկանաք ստանալ առավել լիարժեք տեղեկություններ, կարող եք առանց երկմտելու դիմել «Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն» հասարակական կազմակերպության իրավաբանին (Վիոլետա Զոփունյան, հեռ.՝ 52 12 18, էլ. փոստ՝ zopunyan@healthrights.am) կամ գրքույկի վերջում թվարկված կազմակերպություններին:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՏՍՏ-ների իրավունքների խախտման հաճախակի հանդիպող օրինակներ . . . . . . . . . . 5

Ձեր իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս . . . . . . . . . . . . 8

Ձեր իրավունքների միջազգային ոլորտը . . . . . . . . . . 18

Պացիենտների 14 իրավունքները և դրանց վերականգնումը խախտման դեպքում . . . . . . . . . 23

Օգտակար հղումներ . . . . . . . . . . . . . . . . 25

**Հեղինակային խումբ՝**

**Մարինե Մարգարյան,** «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ

**Վիոլետա Զոփունյան,** «Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն» ՀԿ իրավաբան

Սույն գրքույկը մշակվել և տպագրվել է «Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն» ՀԿ կողմից՝ Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի և Բաց հասարակության ինստիտուտի հանրային առողջապահության ծրագրերի «Իրավունք և առողջապահություն» նախաձեռնության օժանդակությամբ:

Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

# ՏՍՏ-ՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՂ ՕՐԻՆԱԿՆԵՐ

Մեր իրականությունում հաճախ կարելի է հանդիպել դեպքերի, երբ առողջական խնդիրներ ունեցող և տղամարդկանց հետ սեռական հարաբերություն ունեցող տղամարդը (ՏՍՏ) խուսափում է դիմել բժշկական հաստատություն, քանի որ առկա է իրական մտահոգություն՝ բժշկական անձնակազմի կողմից արժանանալու խտրական, անհանդուրժող, արժանապատվությունը նվաստացնող և վիրավորական վերաբերմունքի:

Ավելին, ՏՍՏ-ները հրաժարվում են բժշկական ծառայություններից, քանի որ ունեն անհանգստություն, որ բժշկական գաղտնիքը չպահպանելու արդյունքում իրենց սեռական վարքագծի մասին մանրամասները հայտնի կդառնան ընտանիքի անդամներին, ընկերներին, աշխատակիցներին և իրենց սոցիալական շրջապատին:

Նշված խնդիրն ուղղակիորեն ազդում է ՏՍՏ-ների առողջության վրա, և այս մարդկանց մարդու իրավունքների խախտումները կարող են հանգեցնել իրական առողջական հետևանքների:

Այս կարևոր հարցերը պարզաբանելուց առաջ եկեք ծանոթանանք հիմնական հասկացություններին ու տանք դրանց մեկնաբանությունները:

## ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ.

***Սեռական կողմնորոշում***՝ յուրաքանչյուր անձի զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակումը որոշակի գենդերի այլ անձի հանդեպ:

***Նույնասեռական (հոմոսեքսուալ)***՝ անձ, ում բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում նույն գենդերի այլ անձի նկատմամբ:

***Տարասեռական (հետերոսեքսուալ)***՝ անձ, ում բնորոշ է զգացմունքային, հուզական, զգայական, ինտիմ և սեռական հակում հակառակ գենդերի այլ անձի նկատմամբ:

***Կարծրատիպ (ստերեոտիպ)*** ՝ միտք, կարծիք կամ համոզմունք անհատի կամ սոցիալական խմբի մասին, որը ձևավորվում, ամրապնդվում, գոյատևում և փոփոխվում է տվյալ հասարակության և ժամանակի մեջ:

***Նախապաշարմունք*** ՝ կանխակալ և կողմնակալ դատողություն և վերաբերմունք՝ հիմնված կարծրատիպի վրա:

***Խտրականություն (դիսկրիմինացիա)***՝ կանխակալ և կողմնակալ գործողություն՝ հիմնված նախապաշարմունքի վրա:

***Պացիենտ***՝ բժշկական օգնություն և սպասարկում ստացող ցանկացած անձ:

Համաձայն ***«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» ՀՀ օրենքի***, յուրաքանչյուր ոք իրավունք ունի ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությանը (տե՛ս ամբողջական հոդվածը ստորև, «Սա՛ է օրենքը» բաժնում):

## ՀԻՇԵ՛Ք.

Անձը կարող է սեռական հարաբերություններ ունենալ ինչպես հակառակ սեռին, այնպես էլ նույն սեռին պատկանող անձանց հետ անկախ իր սեռական կողմնորոշումից: Բոլոր դեպքերում, սա չի կարող անձանց մարդու իրավունքների ոտնահարման հիմք դառնալ:

Ցավոք, մեր իրականությունում SUS-ները իրենց սեռական կողմնորոշման և (կամ) սեռական վարքագծի պատճառով հաճախ դառնում են ծաղրուծանակի ու հալածանքի թիրախ: Ավելին, անեն քայլափոխի ու զանգվածային լրատվական միջոցներով խախտվում է նրանց ամենաառաջնային իրավունքները: SUS-ները ամենուրեք ու ցանկացած միջավայրում ենթարկվում են դաժան խտրական վերաբերմունքի, որը ոչ այլ ինչ է, քան նրանց մարդու իրավունքների կոպիտ խախտում:

Ահա բժշկական օգնության և սպասարկման ոլորտում **SUS-ների մարդու իրավունքների խախտման տիպիկ օրինակներ**:

- Բազմաթիվ բժիշկներ, նույնիսկ՝ հոգեբաններ, SUS-ներին (նաև՝ նույնասեռականներին) դիտարկում են որպես հոգեկան խանգարում ունեցող անձիք, իսկ նույնասեռ հարաբերությունները՝ պաթոլոգիա (այլ կերպ ասած՝ ախտաբանական շեղում կամ հիվանդություն):
- Բազմաթիվ բժիշկներ, բուժքույրեր և բժշկական հաստատության այլ աշխատակիցներ խախտում են SUS-ների սեռական կողմնորոշման ու անձնական կյանքի գաղտնիության իրավունքը՝ իրենց աշխատակիցներին և այլ անձանց պատմելով և տարածելով իրենց պացիենտների սեռական վարքագծի և (կամ) սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունները:
- Հաճախ բուժհաստատություններում SUS-ներին վերաբերվում են բացահայտ արհամարհանքով, իսկ նման պացիենտներին դիմում են վիրավորական արտահայտություններով:
- Քիչ չեն դեպքերը, երբ SUS-ների նկատմամբ բացասական և խտրական վերաբերմունքից ելնելով նրանց չեն տրամադրվում որակյալ բժշկական ծառայություններ և սպասարկում:
- SUS-ները խտրական վերաբերմունքի են հանդիպում նաև զինվորական կոմիսարիատում բժշկական հետազոտության ենթարկվելիս:

**ՀԻՇԵՔ.**

Նույնասեռականությունը հիվանդություն չէ:

Իրականում, առաջասար հոգեկան առողջության կազմակերպությունները հաստատել են, որ **նույնասեռականությունը հոգեկան խանգարում չէ**:

1973թ. Հոգեբույժների ամերիկյան ասոցիացիայի հոգաբարձուների խորհուրդը հանել է «նույնասեռականությունը» ***Հոգեկան խանգարումների ախտորոշման և վիճակագրության ձեռնարկից (DSM),*** որով ԱՄՆ-ում առաջնորդվում են հոգեկան և վարքի խանգարումներն ախտորոշելիս: Առողջապահության համաշխարհային կազմակերպության Գլխավոր ասամբլեան ևս 1990թ. մայիսի 17-ին հեռացրել է «նույնասեռականություն» ախտորոշումը ***Հիվանդությունների միջազգային դասակարգչի*** (ICD) հոգեկան խանգարումների ցանկից:

Այնինչ, բժիշկների, այդ թվում՝ հոգեբանների ու հոգեբույժների կողմից մինչ օրս շարունակվում է նախապաշարմունքային և կարծրատիպային մոտեցումը, երբ նույնասեռ հարաբերությունները դիտարկվում են իբրև հոգեկան խանգարում: Սա ոչ այլ ինչ է, քան գիտական որևէ հիմնավորումից զուրկ բժշկական կողմից սխալ, որը հանգեցնում է ԼԳԲՏ-ների մարդու իրավունքների ոտնահարմանը:

# ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՍՏԱՆԱԼԻՍ

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս ՏՍՏ-ները *կարող են և պետք է օգտվեն մարդու իրավունքները սահմանող համընդհանուր նորմերից*, որոնք ամրագրված են ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենքներով: Ըստ որում, օրենքով կարգավորված են ինչպես պացիենտի հիմնական իրավունքները, այնպես էլ այդ առողջապահական ծառայություն մատուցողների պարտականությունները: Այս իմաստով, որևէ տարբերություն չկա՝ վիրաբույժի կամ թերապևտի օգնությանն է դիմել ՏՍՏ-ն, թե՞ մեկ այլ պացիենտ:

**ՀԻՇԵ՛Ք.**

Խտրական և անհարգալից վերաբերմունքը, բուժօգնություն ցույց չտալը, բժշկական գաղտնիքի տարածումը, հիվանդի կամքը և համաձայնությունն արհամարհելը Ձեր իրավունքների կոպիտ խախտումներ են, որոնք պատժվում են օրենքով (տե՛ս ստորև):

## ՏՍՏ ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՏՍՏ-ները, ինչպես մեր հանրապետության բոլոր քաղաքացիները, բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում են մարդու իրավունքներից, որոնք ամրագրված են ***ՀՀ Սահմանադրությամբ և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքով***:

**ՀԻՇԵ՛Ք.**

ՏՍՏ-ն, ինչպես մեկ այլ քաղաքացի, բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս օգտվում է հետևյալ **ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՑ**՝

- անխտրական և հարգալից վերաբերմունք ստանալու.
- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի ընտրության.
- հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում բժշկական օգնություն և սպասարկում ստանալու.
- իրենց հիվանդության մասին տեղեկություններ ստանալու.
- իրենց առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության պահպանման.
- բուժման համար համաձայնություն տալու և (կամ) հրաժարվելու (բանավոր կամ գրավոր, բացառությամբ հարկադիր բուժման դեպքերի).
- բուժման ընթացքում իրենց առողջությանը հասցված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու:

*Անխտրական և հարգալից վերաբերմունք ստանալու իրավունքը* նշանակում է, որ չկան «լավ» ու «վատ», «արժանի» և «անարժան», «անվճարունակ» և «հարուստ», «SUS» և «ոչ SUS» պացիենտներ, իսկ բժշկի և բուժքրոջ կողմից բոլոր պացիենտների նկատմամբ պետք է դրսևորվի նույն` հարգալից, հոգատար և բարեհամբույր վերաբերմունքը:

*Հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում բուժօգնություն ստանալու իրավունքը* մի կողմից պացիենտի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորում է, մյուս կողմից էլ նրան հնարավորություն է տալիս խուսափել ներհիվանդանոցային վարակիչ հիվանդություններից:

*Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի ընտրության* իրավունքն իր հերթին թույլ է տալիս պացիենտին ազատորեն ընտրել այն բուժհաստատությունը, որտեղ ցանկանում է նա հետազոտվել կամ բուժվել, իսկ որոշ դեպքերում նաև` ընտրել բուժող բժշկին:

Իհարկե, ողջ բուժման ընթացքում ցանկացած անձ, այդ թվում` SUS-ն ունի *իր հիվանդության մասին տեղեկություններ ստանալու իրավունք,* որը նշանակում է, որ նա կարող է բժշկից պահանջել, որպեսզի վերջինս լիարժեք տեղեկություն տրամադրի իր հիվանդության, կատարված հետազոտությունների արդյունքների, ախտորոշման և նախատեսվող բուժական միջամտությունների կամ մեթոդների մասին:

Բոլոր պացիենտները, այդ թվում` SUS-ներն ունեն իրենց *բժշկական տվյալների գաղտնիության պահպանման իրավունք*, որը նշանակում է, որ նրանք կարող են պահանջել բժշկից` պահպանել իրենց առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիությունը: Նման տեղեկությունները խիստ անձնական են, իսկ SUS-ները, ինչպես և մյուսները, ունեն անձնական կյանքի գաղտնիության իրավունք:

Բացառությամբ դատարանի որոշմամբ հարկադիր բուժման և կյանքին վտանգ սպառնացող դեպքերի, մարդիկ *իրավունք ունեն տալու իրենց համաձայնությունը կամ հրաժարվելու առաջարկվող հետազոտություններից կամ բուժական միջամտություններից,* իսկ սա նշանակում է, որ իր սեփական առողջության վերաբերյալ վերջնական որոշում կայացնողը և առաջարկվող բուժմանը համաձայնություն տվողը կամ հրաժարվողը պետք է լինի միայն տվյալ անձը:

Վերջապես, *բուժման ընթացքում հիվանդի առողջությանը հասցված վնասի դիմաց փոխհատուցում ստանալու իրավունքը* նշանակում է, որ, դատական կարգով ապացուցվելու դեպքում և դատարանի որոշմամբ յուրաքանչյուր ոք կարող է պահանջել բուժման ընթացքում հասցված վնասի դիմաց համարժեք հատուցում:

## ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԵՎ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պացիենտի իրավունքներն ունեն իրենց պահպանման ***երաշխիքները,*** որոնք, ինչպես իրավունքների դեպքում էր, ամրագրված են ինչպես հայաստանյան

ներպետական, այնպես էլ միջազգային օրենքներով: Եթե կա իրավունք, ապա կա նաև այդ իրավունքի պահպանման պատասխանատուն: Վերևում թվարկած իրավունքների իրականացման համար պատասխանատու են ***բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները*** (բժշկական հաստատության տնօրեն, բաժնի վարիչ, բուժող բժիշկ, բուժակ, բուժքույր և այլն): Նրանք, մասնավորապես, **ՊԱՐՏԱՎՈՐ ԵՆ՝**

- յուրաքանչյուր մարդու ցուցաբերել *անհետաձգելի առաջին բժշկական օգնություն*՝ անկախ այդ օգնության դիմաց վարձատրությունը երաշխավորող հիմքերի.
- տրամադրել *որակյալ* բժշկական օգնություն և սպասարկում.
- հիվանդին *տրամադրել հստակ տեղեկություն* նրան տրամադրվելիք բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի, մեթոդների, ծավալների, տրամադրման կարգի, պայմանների և կատարված ծախսերի մասին.
- ապահովել մարդու բժշկի օգնությանը դիմելու փաստի և նրա առողջական վիճակի մասին *տեղեկությունների գաղտնիությունը*.
- հիվանդների նկատմամբ ցուցաբերել *հոգատար և հարգալից վերաբերմունք*:

**ՀԻՇԵՔ.**

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս մարդու իրավունքների խախտումների համար բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները **պատասխանատվություն են կրում՝** Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հիվանդների իրավունքների խախտման համար նախատեսված են համապատասխան դրույթներ ինչպես Հայաստանի Հանրապետության քրեական, այնպես էլ վարչական օրենսգրքերում: Ահա դրանցից ամենակարևորները:

- *Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու* համար նախատեսված է պատասխանատվություն ***ՀՀ Քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով***:
- *Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելու համար* նախատեսված է պատասխանատվություն ***ՀՀ Քրեական օրենսգրքի 127-րդ հոդվածով***:
- *Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելու համար* նախատեսված է պատասխանատվություն ***ՀՀ Քրեական օրենսգրքի 145-րդ հոդվածով***:
- Ինչ վերաբերում է *քաղաքացու կյանքին կամ առողջության պատճառ-*

*ված վնասի հատուցմանը*, ապա այն սահմանված է ***ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 2-րդ բաժնում***: Օրինակ, այդ օրենսգրքի ***1078-րդ հոդվածի 1-ին մասը*** սահմանում է, որ քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանակուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

Բոլոր այս հոդվածների ամբողջական տեքստերը մեջբերված են ստորև:

## ՍԱ Է ՕՐԵՆՔԸ

***ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ***

**Հոդված 38.**

Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով:

***ՀՀ օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», ընդունված՝ 04.03.1996***

**Հոդված 4. Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու մարդու իրավունքը**

Յուրաքանչյուր ոք, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, Հայաստանի Հանրապետությունում ունի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալ անվճար կամ արտոնյալ պայմաններով՝ պետության կողմից երաշխավորված առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում:

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի այդ ծրագրերի շրջանակներից դուրս բժշկական օգնություն եւ սպասարկում ստանալ բժշկական ապահովագրական հատուցումների, անձնական վճարումների, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ աղբյուրների հաշվին:

**Հոդված 5. Մարդու իրավունքները բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս**

Բժշկական օգնության դիմելիս, ինչպես նաև բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս յուրաքանչյուր ոք իրավունք ունի՝

ա) ընտրել բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողին.

բ) ստանալ բժշկական օգնություն և սպասարկում՝ հիգիենայի պահանջներին համապատասխանող պայմաններում.

գ) պահանջել բժշկի օգնությանը դիմելու փաստի, իր առողջական վիճակի, հետազոտման, ախտորոշման և բուժման ընթացքում պարզված տեղեկությունների գաղտնիության ապահովում, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից.

դ) իրազեկ լինել իր հիվանդության մասին և համաձայնություն տալ բժշկական միջամտության համար.

ե) հրաժարվել բժշկական միջամտությունից, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից.

զ) արժանանալ հարգալից վերաբերմունքի՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից:

**Հոդված 6. Բժշկական օգնության և սպասարկման ընթացքում հասցված վնասի փոխհատուցում ստանալու մարդու իրավունքը**

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման և իրականացման ընթացքում իր առողջությանը հասցված վնասի դիմաց ստանալ փոխհատուցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 7. Առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը**

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի մատչելի ձևով ստանալ տեղեկություն իր առողջական վիճակի, հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Մարդու առողջական վիճակի մասին տեղեկությունը նրա կամքին հակառակ չի կարող հաղորդվել նրան կամ այլ անձանց, բացի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերից:

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված հիվանդների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին:

**Հոդված 8. Համաձայնությունը բժշկական միջամտության համար**

Մարդու համաձայնությունը բժշկական միջամտության համար անհրաժեշտ

պայման է, բացի սույն օրենքով նախատեսված դեպքերից:

Բուժողի կամ բուժվողի պահանջով համաձայնությունը կարող է լինել նաև գրավոր

**Հոդված 16. Բժշկական օգնություն և սպասարկման իրականացումը առանց մարդու համաձայնության**

Առանց մարդու կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության թույլատրվում է իրականացնել բժշկական օգնություն և սպասարկում մարդու կյանքին սպառնացող վտանգի, ինչպես նաև շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների դեպքերում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 17. Բժշկական միջամտությունից հրաժարվելը**

Յուրաքանչյուր ոք կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվել բժշկական միջամտությունից կամ պահանջել ընդհատել այն, բացի սույն օրենքի 16 հոդվածով նախատեսված դեպքերից:

Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում հիվանդի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից:

***ՀՀ Օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին», ընդունված՝ 11.12.2002***

**Հոդված 4. Վերարտադրողականության հետ կապված մարդու իրավունքները**

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և օրենքներին, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան՝ յուրաքանչյուր ոք ունի կենսական անհրաժեշտության սեռական և վերարտադրողական հետևյալ իրավունքները.

1) ինքնուրույն տնօրինել իր սեռական ու վերարտադրողական կյանքը, եթե դա չի վտանգում այլոց առողջությանը.

***ՀՀ Քրեական օրենսգիրք, ընդունված՝ 18.04.2003***

**Հոդված 123. Մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելը**

1. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով վարակելու ակնհայտ վտանգի ենթարկելը

*պատժվում է տուգանքով՝նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրհիսնապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով:*

2. Այլ անձին մարդու իմունային անբավարարության վիրուսի հարուցիչով դիտավորությամբ կամ ինքնավստահությամբ վարակելն այն անձի կողմից, ով գիտեր իր մոտ այդ հիվանդության առկայության մասին՝

պատժվում է *ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:*

3. Սույն հոդվածի երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) երկու կամ ավելի անձանց նկատմամբ,

2) անչափահասի նկատմամբ,

3) ակնհայտ հղի կնոջ նկատմամբ,

պատժվում է *ազատազրկմամբ՝երեքից ութ տարի ժամկետով:*

**Հոդված 127. Անձին առանց իր համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը**

1. Անձին՝ առանց իր ազատ կամաարտահայտության և իրազեկված ու պատշաճ ձևակերպված համաձայնության բժշկական կամ գիտական փորձերի ենթարկելը՝

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ,

2) հանցավորից նյութական կամ այլ կախվածության մեջ գտնվող անձի նկատմամբ,

3) անչափահասի նկատմամբ՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

3. Նույն արարքը, որը կատարվել է կազմակերպված խմբի կողմից կամ անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

**Հոդված 129. Հիվանդին օգնություն ցույց չտալը**

1. Հիվանդին առանց հարգելի պատճառի օգնություն ցույց չտալն այն անձի կողմից, ով պարտավոր էր դա ցույց տալ, եթե հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:*

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է հիվանդի մահ՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

**Հոդված 130. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը**

1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը՝ դրանց նկատմամբ անփույթ կամ անբարեխիղճ վերաբերմունքի հետևանքով, եթե բուժվող հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երեք ամիս ժամկետով:*

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է բուժվող հիվանդի մահ կամ մարդու իմունային անբավարարության վարակի հարուցիչով վարակում՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

**Հոդված 139. Սեռական բնույթի գործողությունները**

1. Համասեռամոլությունը կամ սեռական բնույթի այլ գործողությունները տուժողի կամքին հակառակ, վերջինիս կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից վեց տարի ժամկետով:*

2. Նույն գործողությունները, որոնք՝

1) կատարվել են մի խումբ անձանց կողմից,

2) կատարվել են տուժողի կամ այլ անձի նկատմամբ առանձին դաժանությամբ,

3) կատարվել են անչափահասի նկատմամբ,

4) անզգուշությամբ առաջացրել են տուժողի մահ կամ այլ ծանր հետևանքներ,

*պատժվում են ազատազրկմամբ՝ չորսից տասը տարի ժամկետով:*

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է տասնչորս տարին չլրացած տուժողի նկատմամբ՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասնհինգ տարի ժամկետով:*

**Հոդված 140.Սեռական բնույթի գործողություններին հարկադրելը**

Անձին սեռական հարաբերության, համասեռամոլության կամ սեռական բնույ-

թի այլ գործողություններ կատարելուն հարկադրելը շանտաժի, գույքը ոչնչացնելու, վնասելու կամ վերցնելու սպառնալիքով կամ տուժողի նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով:*

**Հոդված 145. Բժշկական գաղտնիքը հրապարակելը**

1. Առանց մասնագիտական կամ ծառայողական անհրաժեշտության բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող անձանց կողմից անձի հիվանդության կամ բժշկական ստուգման արդյունքների մասին տեղեկություններ հրապարակելը՝

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:*

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված գործողությունները, որոնք անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ՝

*պատժվում են ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:*

***ՀՀ Քաղաքացիական օրենսգիրք, ընդունված՝ 05.05.1998***

**Հոդված 1078. Առողջության քայքայմամբ պատճառված վնասը հատուցելու ծավալը և բնույթը**

1. Քաղաքացուն հաշմություն կամ նրա առողջությանն այլ վնաս պատճառելու դեպքում հատուցման ենթակա են տուժողի կորցրած աշխատավարձը (եկամուտը), որը նա ստանում էր կամ կարող էր ստանալ, ինչպես նաև առողջության քայքայման հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերը՝ ներառյալ բուժվելու, լրացուցիչ սննդի, դեղամիջոցներ ձեռք բերելու, պրոթեզավորման, կողմնակի խնամքի, առողջարանային-կուրորտային բուժման, հատուկ տրանսպորտային միջոցներ ձեռք բերելու, այլ մասնագիտություն ձեռք բերելու համար ծախսերը, եթե պարզվել է, որ տուժողն ունի օգնության ու խնամքի նման տեսակների կարիք և չունի դրանք անվճար ստանալու իրավունք:

2. Կորցրած աշխատավարձը (եկամուտը) սահմանելիս տուժողին՝ հաշմության կամ առողջության այլ վնասի հետ կապված, նշանակված հաշմանդամության կենսաթոշակը, ինչպես նաև այլ կենսաթոշակներն ու նպաստները և այլ նմանօրինակ վճարները, որոնք նշանակվել են առողջության քայքայումից առաջ կամ հետո, հաշվի չեն առնվում ու չեն հանգեցնում վնասի հատուցման չափի նվազեցման (հաշվի չեն առնվում ի հաշիվ վնասի հատուցման): Վնասը հատուցելիս հաշվի չի առնվում նաև տուժողի կողմից առողջության

ֆայֆայումից հետո ստացած աշխատավարձը (եկամուտը):

3. Տուժողին պատճառված վնասի հատուցման ծավալը և չափը կարող է մեծացվել օրենքով կամ պայմանագրով:

***<u>ՀՀ Օրենքը «Անհատական տվյալների մասին», ընդունված՝ 08.10.2002</u>***

**Հոդված 3 Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները**

*անհատական տվյալ*՝ ֆիզիկական անձին վերաբերող փաստերի, դեպքերի, հանգամանքների մասին ցանկացած տվյալ այնպիսի տեսքով, որը թույլ է տալիս կամ կարող է թույլ տալ նույնականացնել անհատի ինքնությունը

**Հոդված 4 Անհատական տվյալների մշակման հիմնական սկզբունքները**

1. Անհատական տվյալները հավաքվում եւ մշակվում են օրինական ձեւով:

2. Անհատական տվյալները հավաքվում են հստակ սահմանված կամ հայտարարված օրինական նպատակների համար եւ չեն կարող օգտագործվել այլ նպատակներով, բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

Արգելվում է այնպիսի անհատական տվյալների հավաքումն ու մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալների մշակման նպատակի իրականացման համար:

3. Անհատական տվյալները պահպանվում են այնքան ժամանակ, որքան պահանջում է այն նպատակը, որի համար դրանք հավաքվել եւ մշակվել են, եթե օրենքով այլ բան  նախատեսված չէ:

**Հոդված 7 Անհատական տվյալների մշակումը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների կողմից**

Անհատական տվյալների մշակումը համարվում է օրինական, եթե՝

անհատական տվյալները մշակվում են տվյալների սուբյեկտի համաձայնությամբ, անհատական տվյալների մշակումը նախատեսված է օրենսդրությամբ, կամ ուղղակի բխում է օրենքից, կամ անհրաժեշտ է օրենքի պահանջները կատարելու համար, անհատական տվյալները մշակվում են պետական եւ հասարակական անվտանգությունն անմիջական սպառնալիքից պաշտպանելու համար:

Տվյալների սուբյեկտի համաձայնությունն անհատական տվյալների մշակման միանշանակ, ցանկացած ձեւով արտահայտված կամավոր թույլտվությունն է: Տվյալների սուբյեկտը յուրաքանչյուր պահի կարող է համաձայնությունը գրավոր ձեւով հետ կանչել: Համաձայնության հետկանչը հետադարձ ուժ չունի:

Ինչպես Հայաստանի Հանրապետության բոլոր քաղաքացիների, այնպես էլ ՏՍՏ-ների իրավունքները երաշխավորված են ոչ միայն ներպետական, այլ նաև միջազգային տարբեր նորմերով: Մինչ օրս Հայաստանի Հանրապետությունը միացել է տարբեր միջազգային պայմանագրերի, *որոնք հանդիսանում են մեր երկրի իրավական համակարգի բաղկացուցիչ մասը:* Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում ՏՍՏ-ների իրավունքների տեսանկյունից առավել կարևորներն են՝

- **Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՔՔԻՄԴ)**, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականի հունիսի 23-ին, և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել նույն տարվա սեպտեմբերի 23-ին.
- **Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր (ՏՍՄԻՄԴ)**, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է 1993 թվականին, Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել նույն տարվա սեպտեմբերի 23-ին.
- **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիա (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա, ՄԻԵԿ)**, որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2001 թվականի հունվարի 25-ին, վավերացվել և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 26-ին.
- **Եվրոպական սոցիալական խարտիա,** որը Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2004 թվականի հունվարի 21-ին և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել նույն տարվա հոկտեմբերի 18-ին:
- **ՀԻՇԵՔ.**
- Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը:

Միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի և սկզբունքների որդեգրմամբ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է պարտականություններ, որոնց ուժով յուրաքանչյուր ոք, այդ թվում՝ ՏՍՏ-ն, ունի ազատության և անձնական անձեռնմխելիության, անձնական կյանքի գաղտնիության, տեղեկատվություն ստանալու, մարդու մարմնի անձեռնմխելիության, կյանքի, առողջության հնարավորինս առավելագույն հասանելի մակարդակի, խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու, հանրային քաղաքականությանը մասնակցելու և, վերջապես, հավասարության իրավունքներ:

**ԱՂՅՈՒՍԱԿ. Բուժօգնություն ստանալու ոլորտում մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական միջազգային չափանիշները**

| Իրավունքի անվանումը | Համապատասխան միջազգային փաստաթուղթը | Խախտման օրինակ |
|---|---|---|
| Ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 9.1<br>ՄԻԵԿ, հոդվ. 5.1 | ՏՍՏ դասադարտյալին թույլ չեն տալիս օգտվել օրական զբոսանքից: |
| Անձնական կյանքի և գաղտնիության իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 17.1<br>ՄԻԵԿ, հոդվ. 8.1 | Վիրաբուժական բաժանմունքում բուժում ստացող ՏՍՏ հիվանդի սեռական կողմնորոշումը հրապարակվում է և հայտնի դառնում ինչպես կլինիկայի ողջ բուժանձնակազմին, այնպես էլ բաժանմունքի մյուս հիվանդներին: |
| Տեղեկատվության իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 19.2<br>ՄԻԵԿ, հոդվ. 8.1 | Հիվանդանոցում ՏՍՏ հիվանդին մերժում են իր բուժման և այլընտրանքների վերաբերյալ լիարժեք տեղեկատվություն տրամադրել: |
| Մարմնի անձեռնմխելիության իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 19.2<br>ՄԻԵԿ, հոդվ. 5.1 | Հիվանդանոցում ՏՍՏ-ն իր կամքին հակառակ ենթարկվում են բժշկագիտական փորձարկման: |
| Կյանքի իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 19.2<br>ՄԻԵԿ, հոդվ. 2.1 | Վիրաբուժական բաժանմունքում անհարկի ձգձգում են ՏՍՏ հիվանդի անհետաձգելի վիրահատությունը: |
| Առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունք | ՏՏՍՄԻՄԴ, հոդվ. 12<br>ԵՍԽ, հոդվ. 11 | ՏՍՏ հիվանդին չի տրամադրվում տվյալ կլինիկայի պայմաններում հնարավոր բուժման ամբողջական ծավալը: |
| Խոշտանգումներից և դաժան, անմարդկային ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 7<br>ՔՔԻՄԴ, հոդվ. 10.1<br>ՄԻԵԿ, հոդվ. 3 | Ոստիկանությունում ՏՍՏ-ին ենթարկում են ծաղրուծանակի և սպառնում վարույթում հրապարակել իր սեռական կողմնորոշումը և (կամ) սեռական վարքագիծը՝ նրանից ցուցմունք կորզելու նպատակով: |

| | | |
|---|---|---|
| Հանրային քաղաքականությանը մասնակցելու իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 25 | ՏԱՏ-ին մերժում են մասնակցել համայնքային զարգացման ծրագրերում: |
| Խտրականությունից զերծ մնալու և հավասարության իրավունք | ՔՔԻՄԴ, հոդվ. 26<br>ՔՔԻՄԴ, հոդվ. 2.2<br>ՏՍՄԻՄԴ, հոդվ. 2.2<br>ՄԻԵԿ, հոդվ. 14<br>ԵՍԽ, հոդվ. 11 | Հիվանդանոցում անհարկի ծգձգում են ՏԱՏ-ի տվյալային վիրահատությունը, չնայած վիրահատվողների հերթի բացակայությանը: |

**ՀԻՇԵՔ.**

**Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային նորմերը**

1. ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական ձերբակալման կամ կալանքի: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով (ՔՔԻՄԴ 9-րդ հոդվածի 1-ին մաս):

Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով  անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, հարբեցողներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը (ՄԻԵԿ-ի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ե» կետ):

2. ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԵՎ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Ոչ ոք չի կարող ենթարկվել քմահաճ կամ անօրինական միջամտության իր անձնական և ընտանեկան կյանքին, քմահաճ կամ անօրինական ոտնձգության իր բնակարանի անձեռնմխելիության կամ իր թղթակցության գաղտնիքի նկատմամբ, կամ էլ անօրինական ոտնձգության իր պատվի ու բարի համբավի նկատմամբ (ՔՔԻՄԴ 17-րդ հոդվածի 1-ին մաս):

Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության հարգանքի իրավունք (ՄԻԵԿ 8-րդ հոդվածի 1-ին մաս):

3. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաքանչյուր մարդ ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք. այդ իրավունքն ընդգրկում է անկախ պետական սահմաններից բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով կամ էլ գեղարվեստական ձևով

արտահայտված կամ մի այլ ձևով սեփական ընտրությամբ բոլոր տեսակի տեղեկություններ ու գաղափարներ որոնելու, ստանալու և տարածելու ազատությունը (ՔՔԻՄԴ 19-րդ հոդվածի 2-րդ մաս):

Յուրաքանչյուր ոք ունի իր առողջության մասին հավաքված ցանկացած տեղեկություն ստանալու իրավունք (ՄԻԵԿ 10-րդ հոդվածի 2-րդ մաս):

## 4. ՄԱՐՄՆԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Առողջապահության ոլորտում միջամտությունը կարող է իրականացվել միայն այն դեպքում, երբ դրան ենթարկվող անձն ինքնակամ և գիտակցաբար է տվել իր համաձայնությունը (ՄԻԵԿ 5-րդ հոդված):

## 5. ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաքանչյուր մարդ ունի կյանքի իրավունք: Այդ իրավունքը պետք է պաշտպանվի օրենքով: Ոչ ոք չպետք է կամայականորեն զրկվի կյանքից (ՔՔԻՄԴ 6-րդ հոդվածի 1-ին մաս):

Յուրաքանչյուրի կյանքի իրավունքը պաշտպանվում է օրենքով: Ոչ մեկին չի կարելի դիտավորությամբ զրկել կյանքից այլ կերպ, քան ի կատարումն դատարանի կայացրած դատավճռի՝ այն հանցագործության համար, որի կապակցությամբ օրենքով նախատեսված է այդ պատիժը (ՄԻԵԿ 2-րդ հոդվածի 1-ին մաս):

## 6. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆՍ ՀԱՍԱՆԵԼԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Սույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են ֆիզիկական և հոգեկան առողջության առավելագույնս հասանելի մակարդակի բոլորի իրավունքը: 2. Այդ իրավունքի լիակատար իրականացմանը հասնելու համար՝ սույն դաշնագրին մասնակցող պետությունների կողմից ձեռնարկվելիք քայլերը պետք է ներառեն  գ) համաճարակային, տեղաճարակային, մասնագիտական և այլ հիվանդությունների կանխարգելումը, բուժումը և վերահսկումը. դ) այնպիսի պայմանների ստեղծում, որոնք կարող են ապահովել հիվանդության դեպքում բոլորի նկատմամբ բժշկական օգնությունը և բժշկական խնամքը (ՏՏՍՄԻՄԴ 12-րդ հոդված):

Առողջության պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու նպատակով Կողմերը պարտավորվում են, ուղղակիորեն կամ պետական կամ մասնավոր կազմակերպությունների հետ համագործակցելով, ձեռնարկել համապատասխան միջոցներ, որոնք, մասնավորապես, ուղղված կլինեն՝ 1) վատառողջության պատճառները հնարավորին չափ վերացնելուն, 2) խորհրդատվական և կրթական հնարավորություններ ապահովելուն՝ առողջությունը խթանելու և առողջության հարցերում անհատի պատասխանատվությունը խրախուսելու նպատակով, 3) համաճարակային, տեղային (էնդեմիկ) և այլ հիվանդությունները, ինչպես նաև դժբախտ պատահարները հնարավորին չափ կանխելուն (ԵՍԽ 11-րդ հոդված):

7. ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԵՎ ԴԱԺԱՆ, ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒ ԱՐԺԱ-ՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԱԶԱՏ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Ոչ nf չmեsf է ենթարկվի խnշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանաmաsվությունը նվաստացնող վերաբերմունfի կամ mաs-ժի: Մասնավnրաmես, nչ nf չի կարnղ առանց իր ազաs արsահայտված համաձայնության ենթարկվել բժշկական կամ գիտական փnրձերի (ՔՔԻՄԴ 7-րդ հnդված):

Ազատությունից զրկված բnլոր անձինf ունեն մարդասիրական վերաբեր-մունfի և մարդկային անհատին հատուկ արժանաmաsվության հարգ-ման իրավունf (ՔՔԻՄԴ 10-րդ հnդվածի 1-ին մաս):

Ոչ nf չmեsf է ենթարկվի խnշտանգումների կամ անմարդկային կամ արժանաmաsվությունը նվաստացնող վերաբերմունfի կամ mաsժի (ՄԻԵԿ 3-րդ հnդված):

8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաfանչյուր fաղաfացի առանց սահմանափակումների mեsf է իրավունf և հնարավnրություն ունենա ա) մասնակցելու mեsական գործերը վարելուն՝ ինչmես անմիջականորեն, այնmես էլ ազաsորեն ընտրված ներկայացուցիչների միջnցnվ (ՔՔԻՄԴ 25-րդ հnդված):

9. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Բnլոր մարդիկ հավասար են օրենfի առաջ և առանց nրևէ խsրականու-թյան օրենfnվ ենթակա են հավասար mաշsmանության: Այդ առնչու-թյամբ nրևէ կարգի խsրականություն mեsf է արգելվի օրենfnվ և օրենfը բnլոր անձանց համար mեsf է երաշխավnրի հավասար և արդյունավեs mաշsmանություն խsրականությունից, ըսs nրևէ հաsկանիշի, այն է՝ ըսs ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, fաղաfական կամ այլ համnզմունfների, ազգային կամ սոցիալական ծագման, գույfային վի-ճակի, ծննդի կամ այլ հանգամանfի (ՔՔԻՄԴ 26-րդ հnդված):

Սույն դաշնագրի մասնակից mեsությունները mարsավnրվում են աmահովել, nր սույն դաշնագրnւմ հռչակված իրավունfները կիրառկա-նացվեն առանց nրևէ խsրականության, այն է՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, fաղաfական կամ այլ համnզմունfների, ազգային կամ սոցիալական ծագման, ծննդի կամ այլ հանգամանfի կաmակ-ցությամբ (ՔՔԻՄԴ 2-րդ հnդվածի 2-րդ մաս, ՏՍՄԻՄԴ 2-րդ հnդվածի 2-րդ մաս):

Սույն Կոնվենցիայnվ սահմանված իրավունfներից և ազաsություննե-րից օգsվելն աmահովվում է առանց խsրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, fաղաfական կամ այլ համnզմունfից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փnfրամասնությանը mաsկանելուց, գույfային դրությունից, ծննդից կամ այլ դրությունից (ՄԻԵԿ 14-րդ հnդված):

# ՊԱՑԻԵՆՏՆԵՐԻ 14 ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

2002 թվականին եվրոպական կազմակերպություններից մեկի՝ «Ակտիվ քաղաքացիության ցանցի» կողմից մշակվել է Պացիենտների իրավունքների եվրոպական խարտիան, որը սահմանում է պացիենտի իրավունքների հստակ, համապարփակ շրջանակ:

Թեև խարտիան իրավաբանորեն պարտադիր չէ, սակայն այն թույլ է տալիս ի մի բերել ՏՍՏ-ների՝ որպես մարդու իրավունքների խախտման տեսանկյունից խոցելի խումբ ներկայացնող պացիենտների հիմնական իրավունքները բուժօգնություն ստանալիս:

Նկատենք նաև, որ այս իրավունքների մեծ մասն իր արտացոլումն է գտել հայաստանյան օրենսդրության մեջ: Պացիենտի 14 իրավունքների իմացությունը թույլ է տալիս արագ կողմնորոշվել և հասկանալ, թե առանձին դեպքերում կոնկրետ որ իրավունքն է խախտվել:

## ՀԻՇԵՔ.

**Խարտիայով սահմանված պացիենտի 14 իրավունքներն են՝**

1. Կանխարգելման միջոցառումների իրավունք
2. Բուժօգնության մատչելիության իրավունք
3. Առողջական վիճակի և բուժօգնության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունք
4. Բժշկական միջամտությանը համաձայնություն տալու իրավունք
5. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողի ազատ ընտրության իրավունք
6. Մասնավոր կյանքի անձեռնմխելիության և գաղտնիության իրավունք
7. Պացիենտի ժամանակը հարգելու իրավունք
8. Բուժման որակի չափորոշիչների պահպանման իրավունք
9. Բուժման անվտանգության իրավունք
10. Նորարարության և ժամանակակից բուժման իրավունք
11. Ոչ անհրաժեշտ տառապանքներից և ցավից զերծ մնալու իրավունք
12. Բուժման անհատական մոտեցման իրավունք
13. Բողոքարկման իրավունք
14. Փոխհատուցման իրավունք

Ինչպես տեսնում եք, վերոնշյալ 14 իրավունքներից նախավերջինը *բողոքարկման իրավունքն* է, իսկ վերջինը՝ *փոխհատուցում ստանալու իրավունքը:* Ուստի, բժշկական օգնություն և սպասարկում ստանալիս, եթե կարծում եք, որ Ձեր իրավունքները խախտվել են, ապա խորհուրդ ենք տալիս ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վերականգնելու Ձեր խախտված իրավունքները, իսկ որոշ

դեպքերում՝ նաև ստանալու փոխհատուցում: Ընդհանուր առմամբ, խախտված իրավունքների վերականգնումը կատարվում է հետևյալ փուլերով:

Արժե սկսել ***տվյալ բաժանմունքի վարիչին կամ բուժհաստատության ղեկավարին դիմելուց***, իսկ Ձեր դիմումն անպատասխան մնալու դեպքում՝ ***նրանց վերադասին*** (օրինակ, որ մի դեպքում բուժհիմնարկի վերադասը կարող է լինել Առողջապահության նախարարությունը, մեկ այլ դեպքում՝ մարզպետարանը կամ քաղաքապետարանը): Խախտված իրավունքների դեպքերի զգալի մասն իրենց լուծումն են ստանում հենց այդ մակարդակում:

Վերադասության կարգով ձեր բողոքի քննության արդյունքում հաջողության չհասնելու դեպքում կարող եք դիմել ***դատարան՝*** դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի շրջանակներում: Մեր հանրապետությունում գործում են առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, ինչպես նաև վճռաբեկ դատարանը: Օրինակ, որ եթե մտադիր եք բողոքարկել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների (նախարարություններ, քաղաքապետարան, մարզպետարան, թաղապետարան) ու դրանց պաշտոնատար անձանց վարչական և նորմատիվ ակտերը, գործողությունները կամ անգործությունը, ապա պետք է դիմել վարչական դատարան:

Եթե Ձեր կարծիքով Ձեր իրավունքների ոտնահարման դեպքում առկա են հանցագործության հատկանիշներ, կարող եք դիմել ***դատախազություն կամ ոստիկանություն***: Կարող են լինել դեպքեր, երբ իրավաբանական օգնություն ստանալու նպատակով Ձեզ մոտ առաջանա անհրաժեշտություն դիմել փաստաբանի օգնությանը:

Պետական մարմինների և դրանց պաշտոնատար անձանց, բացառությամբ դատարանների և դատավորների, կողմից Ձեր իրավունքների խախտման դեպքում կարող եք Ձեր խախտված իրավունքի վերականգնման խնդրանքով դիմել ***ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին:*** Այս դեպքում օրինակ, որ պետք է նախ և առաջ դիմել համապատասխան պետական մարմնին, որը վերահսկում է առողջապահական հաստատության գործունեությունը, և նոր միայն, պատասխան չստանալու կամ ոչ բավարար պատասխան ստանալու դեպքում բողոքը կարող է ներկայացվել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին: Բողոքի առարկան պետք է լինի այն, որ պետական մարմինը հիմնավոր կամ օրինական որոշում չի կայացրել անձի իրավունքների վերաբերյալ:

Վերջապես, դուք կարող եք Ձեր մտահոգությունը կամ բողոքը ներկայացնել ***պացիենտների իրավունքների պաշտպանության ոլորտի հասարակական կազմակերպություններին***, որոնք կաջակցեն Ձեզ ընտրելու բողոքարկման ճիշտ և արդյունավետ քայլերը:

# ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

**ՀՀ Առողջապահության նախարարություն**

*Նախարար՝ Հարություն Քուշկյան*
*Հասցե՝ Երևան 0010, Հանրապետության հրապարակ, Կառավարության տուն 3*
*Հեռախոս՝ 544028, 544027*
*Թեժ գիծ՝ 528872*
*Էլ. փոստ՝ info@moh.am*
*Վեբ կայք՝ www.moh.am*

**Մարդու իրավունքների պաշտպան**

*Պաշտպան՝ Կարեն Անդրեասյան*
*Հասցե՝ Երևան 0002, Պուշկին 56ա*
*Հեռ.՝ 537651,*
*Թեժ գիծ՝ 1-16*
*Ֆաքս՝ 538842*
*Էլ. հասցե՝ ombuds@ombuds.am*
*Վեբ կայք՝ www.pashtpan.am*

**Հանրային պաշտպանի գրասենյակ**

*Ղեկավար՝ Մասիս Ղազանչյան*
*Հասցե՝ Երևան 0009, Կորյուն 8, բն.5*
*Հեռ.՝ 583844, 586015*

**Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք (ՓԻՆՔ Արմենիա) ՀԿ**

*Նախագահ՝ Մամիկոն Հովսեփյան*
*Հասցե՝ Նալբանդյան 41/1, բն. 1ա*
*Հեռ.՝ 060-377277*
*Թեժ գիծ՝ 099-522533*
*Էլ. հասցե՝ info@pinkarmenia.org*
*Վեբ կայք՝ www.pinkarmenia.org*

**Առողջապահական նախաձեռնությունների հայկական կենտրոն ՀԿ**

*Վիոլետա Զոփունյան, իրավաբան*
*Հասցե՝ Երևան 0001, Թումանյան փ. 8-423*
*Հեռ.՝ (+374)(10) 521218*
*Էլ. հասցե՝ zopunyan@healthrights.am*
*Վեբ կայք՝ www.healthrights.am*

# ՆՇՈՒՄՆԵՐ

# ՆՇՈՒՄՆԵՐ

# ՆՇՈՒՄՆԵՐ